Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Ապրիլի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմի Սրբազան Քահանայապետ Հովհաննես-Պողոս Բ Պապի մահվան առիթով հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ցավակցական գիր է հղել Վատիկան և իր սրտակցությունը հայտնել Կաթոլիկ Եկեղեցու սգակիր ողջ հոգևոր դասին ու հավատացյալներին:

Ամենայն Հայոց Հայրապետի գրության մեջ մասնավորապես ասվում է. «Մենք ջերմությամբ ենք հիշում մեր հանդիպումը Նորին Սրբության հետ Վատիկանում, ինչպես նաև նրա պատմական այցը Հայաստան 2001 թվականին: ...Հիվանդության վերջին տարիներին մենք ականատես եղանք ի Քրիստոս Մեր հոգևոր եղբոր կողմից ցուցաբերած ոգու ամրության և քաջության, որպես լավագույն օրինակ հավատի, Աստծո նախախնամող կամքի հանդեպ հույսի և ապավինության: 26-ամյա գահակալության ընթացքում Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը եղավ կյանքի նախանձախնդիր պաշտպան և առաջամարտիկ արդարության: Նորին Սրբության կոչերը, ազգերի միջև խաղաղության և հաշտության հաստատման, մշտապես ամրորեն խարսխված են եղել նրա բարոյական համոզումների և մարդկության հանդեպ սիրո վրա: Վերջին տարիներին նրա ջանքերի և Մեր երջանկահիշատակ նախորդների գործունեության շնորհիվ եղբայրական սերը և համագործակցության ոգին մեր երկու Եկեղեցիների միջև մեծապես ամրապնդվել են»:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, կատարվեց հոգեհանգստյան մասնավոր արարողություն երջանկահիշատակ Հովհաննես-Պողոս Բ Պապի հոգու հանգստության համար: «Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև, սրտակից Մեր կաթոլիկ եղբայրներին ու քույրերին իրենց վշտի մեջ, Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետ, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի հոգու հանգստության համար: Նորին Սրբության մահը մեծ կորուստ էր ողջ քրիստոնեական աշխարհի համար: Նա եղավ անդուլ քարոզիչ խաղաղության և պաշտպան քրիստոնեական արժեքների: Նշանակալի էին Հովհաննես-Պողոս Բ Պապի հարատև ճամփորդությունները՝ նպատակաուղղված ազգերի, պետությունների և կրոնների համերաշխության, համագործակցության և փոխհասկացողության ոգու ձևավորմանն ու ամրապնդմանը: ...Թող Բարձրյալ Տերը մխիթարություն պարգևի նրա բարեպաշտ և հավատավոր հոտին»,- մասնավորաբար ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեհանգստյան արարողությունից առաջ հավատացյալներին ուղղված իր խոսքում: